ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-ԻՆ ԳՈՒՄԱՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 91-րդ հոդվածի 7-րդ մասը և 41-րդ հոդված 6-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության նախաձեռնությամբ 2020 թվականի ապրիլի 28-ին գումարված Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ նիստի օրակարգային առաջին հարցի՝

1) Մինչև 15 րոպե տևողությամբ հիմնական զեկուցմամբ հանդես է գալիս վարչապետը կամ պետական ֆինանսների կառավարման բնագավառում Կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի ղեկավարը

2) Հիմնական և յուրաքանչյուր հարակից զեկուցողին՝
   1) հարցերի համար հատկացնել երկուական րոպե ժամանակ,
   2) հարցերին պատասխանելու համար հատկացնել երեքական րոպե ժամանակ,
   3) արձագանքելու համար հատկացնել մեկական րոպե ժամանակ

3) Մինչև վեցական րոպե տևողությամբ հարակից զեկուցումներով հանդես է գալիս՝
   1) գլխադասային հանձնաժողովի ներկայացուցիչը՝ հանձնաժողովի եզրակացությունը ներկայացնելու համար

4) Մտքերի փոխանակության ելույթների համար նախատեսել վեցական րոպե ժամանակ:
5) Մտքերի փոխանակությունն ավարտվում է վարչապետի կամ պետական ֆինանսների կառավարման բնագավառում Կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ մինչև 20 րոպե տևողությամբ եզրափակիչ ելույթով:
6) Մտքերի փոխանակությունն ավարտվելուց հետո նիստը նախագահողը հայտարարում է նախագծի քննարկման ընդմիջում՝ առնվազն 7 ժամ:
7) Նախագծի քննարկումն ընդմիջելուց հետո նախագծի վերաբերյալ գրավոր առաջարկների և գլխադասային հանձնաժողովի եզրակացությունը ներկայացնելու համար սահմանել երեքական ժամ:
8) Պետական բյուջեի մասին օրենքի նախագծի քննարկումը վերսկսել սույն որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետով նախատեսված ժամկետը լրանալուց անմիջապես հետո:
9) Հիմնական զեկուցողին նախագծի վերջնական տարբերակը և առաջարկությունների ամփոփաթերթև ներկայացնելու համար հատկացնել 15 րոպե ժամանակ
10) Հիմնական և յուրաքանչյուր հարակից զեկուցողին՝
    1) հարցերի համար հատկացնել երկուական րոպե ժամանակ,
    2)հարցերին պատասխանելու համար հատկացնել երեքական րոպե ժամանակ,
    3) արձագանքելու համար հատկացնել մեկական րոպե ժամանակ
11) Հայտ ներկայացնելու դեպքում վեցական րոպե տևողությամբ մեկական ելույթի իրավունք ունեն՝
    1) նախագծի վերաբերյալ առաջարկ ներկայացրած պատգամավորները.
    2) խմբակցությունների մեկական ներկայացուցիչները.
    3) գլխադասային հանձնաժողովի ներկայացուցիչը
    4) Ազգային ժողովի նախագահը, նրա տեղակալները:
12) Եզրափակիչ ելույթների համար նախատեսել 10 րոպե ժամանակ:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության նախաձեռնությամբ 2020 թվականի ապրիլի 28-ին գումարված Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ նիստի օրակարգային երկրորդ և երրորդ հարցերի երկրորդ ընթերցմամբ քննարկումը կազմակերպել առաջին ընթերցմամբ դրանց ընդունումից հետո՝ 24 ժամվա ընթացքում: Նախագծի վերաբերյալ գրավոր առաջարկները և գլխադասային հանձնաժողովի եզրակացությունը ներկայացնելու համար սահմանել երեքական ժամ: